№ 148 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27 1888 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27 № 148

ՏԱՍՆ ԵՒ Վ.ԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԵԿՈՂ 1889 ԹՒԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բաղարնայա փողոցների անկիւնում Թամամշեվի տանը)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հասարակութեան հասկացողութիւնը. Տնային վարժուհիները. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի քանի խօսք Իտալիայի մասին. Արտաքին լուրեր.—ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ՖԵԼԻԵՏՕՆ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆԸ

—

«Մշակի» մէջ անցեալ անգամ հաղորդած լուրը, որ իբրև թէ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան մի մասը դիտաւորութիւն ունի հրաժարական տալու հոգաբարձական պաշտօնից,—անսպասելի մի բան է թվացել հասարակութեան զանազան շրջաններում։

Մենք չենք էլ զարմանայ, եթէ վաղը, երբ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան մի մասը իրօք հրաժարական կը տայ, մեր հասարակութեան նոյն իսկ ինտելիգէնտ մասը՝ հակակրութեամբ կը վերաբերվի և կը դատապարտէ այդ քայլը....

Ասում ենք չենք զարմանայ, որովհետև՝ ոչ թէ մեր հասարակ ժողովուրդը, այլ նոյն իսկ մեր հասկացող «համարված» դասակարգը շատ կոպիտ և թիւր հասկացողութիւն ունի «իրաւունք» և պատիւ ասած բաների մասին։

Դիցուք մեր հասարակութեան մէջ մէկը ընտրվում է, օրինակ, դպրոցի հոգաբարձու և կամ մի դպրոցի տեսուչ. անցնում է մի առ ժամանակ, հոգաբարձուի կամ հոգաբարձութեան իրաւունքները խախտվում են, կամ ինքն հոգաբարձութիւնը հողի հետ է հաւասարեցնում տեսչի իրաւունքները, տեղի են ունենում ամեն կողմից ամեն տեսակ կամայականութիւններ,—և երբ այդ բոլոր մէկը միւսի ետեւից պարբերաբար կրկնվող կամայականութիւններին և իրաւազանցութիւններին զոհ չը լինելու և գործին չը վնասելու համար, հոգաբարձութիւնը կամ տեսուչը հրաժարական են տալիս,—հասարակութիւնը, որը այդպիսի դէպքերում ամենից առաջ պէտք է դիմադրէր կամայականութեանը, ընդհակառակը, սկսում է տրտնջալ, որ այս ինչ հոգաբարձութիւն կամ տեսուչ հրաժարվում են իրանց պաշտօնից, չը կամենալով կամայականութեան տակ ճնշվել....

«Պէտք է եօլա տանել»,—ահա թէ ինչ է ասում այդպիսի դէպքերում հասարակութիւնը, որը շատ կոպիտ և մութ հասկացողութիւն ունի «իրաւունքի» և պատիւ խնդրի մասին։

Բայց, ասեցէք խնդրեմ, միթէ «եօլա տանել» կարելի է այն դէպքում, երբ կամայականութիւնը և իրաւազանցութիւնը ճնշում և անպատւում են ոչ թէ միայն հոգաբարձուի և տեսչի անձնաւորութիւնը, այլ դրանց ճնշելով՝ ճնշում և ոտնակոխ են անում այն հիմնարկութիւնը, որին դրանք ծառայում են, և այն հասարակութիւնը, որից դրանք ընտրված են։

Տեսչի իրաւունքները կամայական կերպով խախտվում են,—նա պէտք է հրաժարական տայ, եթէ չէ կարողանում վերականգնել իր իրաւունքները և պատիւը, հակառակ դէպքում կը նշանակէ, որ նա ոչ թէ գործին և սկզբունքին է ծառայում, այլ մէկայն իր «գրպանին» և իր շահերին։

Հոգաբարձութեան իրաւունքը ոտի տակ է տրվում, նրա պատիւը ցեխի մէջ է գցվում, և ուրիշ ելք չէ մնում այդ դէպքում, բայց եթէ այն, որ հոգաբարձութիւնը հրաժարական տայ, որով միայն պաշտպանած կը լինի իր անունը, դպրոցի ու ժողովրդի իրաւունքները։ Հակառակ դէպքում կը նշանակէ, որ ինքն հոգաբարձութիւնը՝ ժողովրդից ընտրված լինելով՝ ամենից առաջ ինքն է արհամարհում ժողովրդի իրաւունքը....

Այդպիսի թիւր և կոպիտ հասկացողութիւն ունենալով իրաւունքի մասին, մեր հասարակութիւնը, անկասկած ինքն, գուցէ անգիտակցաբար, աւելի էլ ոյժ է տալիս ամեն տեսակ կամայականութիւններին, որոնք պարբերաբար կրկնվելով, վերջը դառնում են սովորական բան և ամեն տեսակ օրէնք....

Բայց ծիծաղելին այն է, որ երբ այդ նոյն մեր հասարակութիւնը լսում է, որ դիցուք Ֆրանսիայում, Գերմանիայում կամ Անգլիայում այս ինչ դպրոցական դործիչը, այն ինչ քաղաքագլուխը, կամ մի որ և է մինիստր, կամ նոյն իսկ ամբողջ մինիստրութիւն անդադար հրաժարականներ են տալիս, երբ իրանց իրաւունքները խախտվում և չօշափվում են,—հրճվում և հիանում է, տեսնելով թէ քաղաքակիրթ երկրում մարդիկ որքան ըզգաստ են և ամեն վայրկեան պատրաստ են ասպարիզից հեռանալու՝ իրաւունքը, պատիւը և սկզբունքը չը խախտելու և չանպատելու համար.... Իսկ երբ այդ նոյն երևոյթը կրկնվում է մեր մէջ, երբ մեր մէջ մի հոգաբարձութիւն կամ մի տեսուչ իր և դպրոցի ինքնավարական իրաւունքները պաշտպանելու համար հրաժարվում է իր պաշտօնից, չը կամենալով զոհ գնալ կամայականութեան,—մեր հասարակութիւնը փոխանակ խրախուսելու այդպիսի քայլը, ուսերը վեր քաշելով բացականչում է՝ պէտք է մի կերպ «եօլա տանել....»

Եւ հէնց այդ «եօլա տանելն» է, կասենք մենք, որ այսքան «կամայականութիւն» և «դիկտատորութիւն» է մտցրել մեր բոլոր հասարակական-ժողովրդական գործերի մէջ, և հէնց այդ «եօլա տանելն» է, որ թուլացնում է սկզբունք և իրաւունք պաշտպանելու գործը։

Երբ ինքն հասարակութիւնը այնքան անհոգ է դէպի իր իրաւունքի գործը, ի հարկէ, ամեն մի տեղից վերկացող և նոյն իսկ այն անձինք, որոնք կոչված են նրա իրաւունքները պաշտպանելու, ոտի տակ կը տան այդ իրաւունքները։

Այդ շատ հասկանալի է։

Խ. Մ.

ՏՆԱՅԻՆ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ

—

Շատ սովորական բան է դարձել դանդատներ լսել այն մասին, որ մեր փոքր ի շատէ ուսում առած օրիորդները յանձն չեն առնում տնային վարժուհու պաշտօն, և կամ ինչպէս ինքն հասարակութիւնն է ասում, «լայեզ» չեն անում յանձն առնել այդ պաշտօնը, և այնպիսի պայմաններ են առաջարկում, որ ընտանիքները դժուարանում են ընդունել այս կամ այն օրիորդին իրանց տներում, իբրև տնային վարժուհիներ։

Ուշադրութեան առնելով հասարակութեան այդ դանդատը, չենք կարող չը նկատել, որ այդ դանդատը շատ էլ հիմնաւոր չէ, և չափազանցութիւն չենք լինի արած, եթէ ասենք, որ այդ տեսակ դանդատները միանդամայն անհիմն են։

Անհիմն են այն պատճառով, որ այն հանգամանքները, որոնցով սովորաբար մեր ընտանիքներում չը գնահատվում են տնային կոչված վարժուհիները՝ այնքան անյարմար, եթէ չասենք անտանելի են, որ դրանց դիմանալ և տանել չէ կարող ոչ մի փոքր ի շատէ ինտելիգէնտ և ինքնասէր օրիորդ։

Մեր ընտանիքներում տնային վարժուհու պաշտօնի մէջ մտցնում են շատ անգամ ոչ թէ երեխաների դաստիարակչուհու, կամ նոյն իսկ բոնայի, այլ ուղղակի այն տեսակ պիտոյքների վրա հոգացողի պարտաւորութիւնները, որոնք շատ անգամ աղախնու գործ են....

Այդ դեռ բաւական չէ. մեր ընտանիքներում, որտեղ, ի հարկէ, դեռ տիրապետում են ասիական շատ բարքերու վարքեր, ընտանիքի անդամները

ՖԵԼԻԵՏՕՆ

Հայերի առաջվայ պահանջները հայոց լրագրից.—Ռուսահայոց լրագրութիւնը մինչև «Մշակի» երևալը։—«Մեղու Հայաստանի» լրագիրը.—Յայտարարութիւն նիւթի փոխարէն.—Հայերի այժմեան պահանջները հայոց մամուլից.—Հիւանդութիւնները.—Պուլվերիզատոր և կարբոլեան թթուն.—Նահանջ տարին և նրա ցաւերը.—Նոր տարվայ հանդիպելը.—Ազգային տօնածառը։

—

Այժմեան ժամանակին հայերը շատ պահանջող են դարձել դէպի լրագիրը։

Եթէ յիշենք ինչ տեսակ լրագրութիւն ունէինք մինչև 1872 թիւը, մինչև «Մշակի» երևալը,—պէտք է և ամաչենք և մի և նոյն ժամանակ ծիծաղենք։

Ամբողջ ռուսահայոց լրագրութիւնը մինչև 1872 թիւը բաղկացած էր «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթից։

Բայց ինչպէս էր հրատարակվում այդ երևելի լրագիրը, երևելի Պետրոս Սիմէօնեանցի խմբագրութեամբ։

Ահա ինչպէս էր կազմվում համարը։

Առաջնորդող, ի հարկէ, երբէք չէր լինում։ Համարը սկսվում էր «Մասիսից» արտատպված Կ. Պոլսի հայոց ազգային ժողովի նիստերի մեզ համար բոլորովին անհասկանալի վիճաբանութիւններից։

Այնուհետև գալիս էր Մայն-Ռիդէի մանկական-առասպելական պատմութիւնների թարգմանութիւնը, այնուհետև տպվում էր մի որ և է անյայտ Թիֆլիսեցի հանգուցեալ պարոնի կամ տիկնոջ կենսագրութիւնը, սև շրջանակով։ Նեկրոլոգը անպատճառ սկսվում էր այսպիսի խօսքերով. «Նա օրինակելի մայր էր, օրինակելի ամուսին էր», կամ «Նա օրինակելի հայր էր և օրինակելի քաղաքացի» և վերջանում էր այսպիսի խօսքերով. «հանգիստ ոսկերացդ։»

Ապա տպվում էր մի լուր, որ մի ոմն Պետրոսեան նուիրել է 5 ռուբլի այս ինչ դպրոցին։ Եւ լուրը վերջանում էր անպատճառ այս խօսքերով. «երանի թէ մեր միւս հարուստները օրինակ առնէին բարերար պարոնից։»

Ապա կարդում էինք մի գաւառական նամակ երեցփոխի, քահանայի և ուսումնարանի մասին,—և դրանով վերջանում էր համարը։

Եթէ վերջին երեսի վրա նիւթը պակասում էր, փոխանակ մտցնելու արտաքին լուրեր, խառն լուրեր և այլն, խմբագիրը տպել էր տալիս վերջին երեսում մնացած դատարկ տեղի վրա՝ մի ծաղկի, մի ոչխարի, մի ծառի պատկերը։

Յայտարարութիւններ գրեթէ չէին լինում։ «Մեղուն» իր գոյութեան վերջին տարին, այն է 1871 թվին, ընդամենն ունէր 150 բաժանորդ....

* * *

Սիմէօնեանցի «Մեղուի» մէջ տպվող յայտարարութիւնների մասին հնագէտ բարեկամներից մին պատմել է ինձ հետեւեալը։

Մի օր վախճանվում է իմ բարեկամիս հայրը։ Վշտացած որդին գնում է «Մեղուի» խմբագրատունը և զետեղել է տալիս Սիմէօնեանցի լրագրի վերջին երեսի վրա սովորական մահացուցակը սև շրջանակով. «Ցաւօք սրտի այս ինչ պարոնը յայտնելով իր սիրելի հօր մահը ազգականներին և բարեկամներին, խնդրում է այս ինչ օր, այս ինչ ժամին չնորհ բերել թաղմանը այս ինչ տեղ։»

Յայտարարութիւնը տպվում է։

Անցնում է մի շաբաթ, հանգուցեալը արդէն թաղված է,—իսկ «Մեղուի» հետեւեալ շաբաթվայ համարում նորից երևում է նոյն յայտարարութիւնը։ Հանգուցեալի որդին ժամանակ չէ ունենում գնալ խմբագրատունը, հաւատացած լինելով որ ուրիշ անգամ այլ ես չի կրկնվի սխալը։

Բայց որքան է լինում պարոնի զարմանքը և վրդովմունքը, երբ երրորդ շաբաթը դարձեալ նոյն յայտարարութիւնն է տպվում, յետոյ չորրորդ շաբաթը, յետոյ հինգերորդ, և այլն և այլն....

Հանգուցեալի որդին վերջապէս ճարահատված վազում է խմբագրի մօտ։

—Պետրոս, ախար այդ տեսակ խայտառակութիւն կը լինի.... Քանի ժամանակ պէտք է թաղես հօրս....

—Է՛հ, բարեկամ, ինչ ես վրդովվում.... ինչ վնաս ունի, մի անգամ չարեցինք ու տպվում է.... Նիւթ է լրագրի համար, էլի....

—Ախար, դա ինչ նիւթ է....

—Բան չը կայ, ով է կարդում.... Բայց եթէ անպատճառ ուզում ես՝ միւս անգամ հանել կը տամ։

Եւ այդ տեսակ լրագրին ոչ ոք մեծ մեծ պահանջներ չէր դնում, ամենքը ներողամտութեամբ էին վերաբերվում դէպի այդ տեսակ մրոտված թերթը....

Կամ գուցէ՝ ոչ թէ ներողամտութեամբ, այլ անտարբերութեամբ.... Այդ էլ կարելի է։

* * *

Այժմ, ընդհակառակն, ինչ ասես անիրագործելի պահանջներ է դնում հայը հայոց լրագրին։

Լրագիրը այս ինչ բանի վրա պէտք է գրի....

Լաւ...

Գրում ես մի յօդուած։

—Այդ ես ինքս էլ գիտէի, պատասխանում է հայը։

Գրում ես մի յօդուած որ հային պակաս է ընկերական ոգի և հարկաւոր են ընկերակցութիւններ։

—Այդ ես ինքս էլ գիտէի, պատասխանում է հայը։ Բայց մի և նոյն ժամանակ ոչինչ չէ անում իրագործելու համար այն, ինչ որ առաջարկում ես։

Գրում ես թէ հայը հակառողջական կերպով է ապրում, թէ պէտք է մաքուր պահել փողոցները, բակերը, բնակարանները, բանալ ամեն օր պատուհանները՝ մաքուր օդը բնակարանում ներմուծելու համար....

այնպիսի հեգնութեամբ, և շատ անգամ արհամարհանքով են նայում տնային վարժուհու վրա, գուցէ այն պատճառով, որ նրան փող են վճարում,—որ փոքր ի շատէ կրթված և ինքն իրան ճանաչող մի օրիորդ չէ կարող շարունակել մնալ այդպիսի պայմաններում։

Անկասկած կան ընտանիքներ, որոնք իրանք այնքան բարեկիրթ, ինտելիգենտ և հասկացող են, որ գիտեն թէ ինչպէս պէտք է վարվել մի ինտելիգենտ, և այն էլ երեխաների վարժուհու պաշտօնը կատարող մի օրիորդի հետ. բայց, ինչ ասել կուզի, որ այդպիսի ընտանիքների թիւը շատ փոքր է։ Ընդհակառակն, սովորական են այնպիսի ընտանիքներ, որոնց փողատոր հայրը կամ խանում-մայրը ամեն բան պահանջում են իրանց տանը ապրող և իրանցից փող ստացող օրիորդից....

Դրան դիմանալ, ի հարկէ չէ կարող ոչ մի վարժուհի, և հասկանալի է ուրեմն թէ ինչու վարժուհիները, որոնք, ի հարկէ, համեմատաբար աւելի հասկացող և աւելի պարտաճանաչ են, և որոնք նոյն իսկ աղքատ ընտանիքներից լինելով, կարօտ են դրամական միջոցների և սիրով յանձն կառնեն վարժուհու պաշտօն՝ փոքր ինչ թէ իրանց և թէ իրանց ընտանիքներին ապահովելու համար,—մեծ դժուարութեամբ են յանձն առնում ապրել այս կամ այն ընտանիքում տնային վարժուհու պաշտօնով, և մինչև անգամ ատելութեամբ խոյս են տալիս այդ պատուաւոր պաշտօնից։

Այդ բանում մեր ընտանիքները, մեր հասարակութիւնը մեղադրում են վարժուհիներին, բայց այդ արդարացի չէ։ Դրա մէջ մեղաւոր են մեծ մասամբ ընտանիքները և նոյն իսկ հասարակութիւնը....

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 26 դեկտեմբերի

Խնդրում եմ ձեզ շնորհ անել ինձ և յայտնել ձեր պատուական թերթի մէջ, որ «Մշակի» 147 համարում հրատարակված այն լուրը, թէ՝ ես չեմ ընդունում ոչ ուղերձներ և ոչ շնորհաւորական նամակներ և հեռագրեր, սխալ է, որովհետև իմ յօբելեանի առիթով ես ոչ միայն չեմ մերժել անձամբ ընդունել ինձ այցելողներին, այլ և ինձ հասած բազմաթիւ և բազմաբովանդակ հեռագիրներին, նամակներին, ուղերձներին ես սիրով պատասխանել եմ և պատրաստվում եմ պատասխանելու։

Ընդունեցէք, մեծարգոյ պարոն, իմ անկեղծ յարգանաց հաւաստիքը։

Գաբրիէլ Սունդուկեանց

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Փարիզից ստացանք հետևեալ հեռագիրը. «Փարիզի հայ և վրացի ուսանողութիւնը մեծ ուրախութեամբ մասնակցում է տաղանդաւոր թատերագրող Սունդուկեանի քսանհինգամեայ յօբելեանին, և ցանկանում է երկար կեանք։»

—

Մեզ ուղարկված է երկու գրքոյկ, որոնք լոյս են տեսել այս օրերս Թիֆլիսում, մէկը «Ղորղչի» վերնագրով, աշխատութիւն Ց. Պետրոսեանի, և միւսը «Աչըղ Ղարիբի հեքիաթը», աշխատութիւն Աչըղ Չիւանիի։ Դրանցից առաջինը արժանի է յիշատակութեան միմիայն մատենագրական ժամանակագրութեան կարգը պահպանած լինելու տեսակէտից, իսկ միւսի բովանդակութեան միայն մի փոքր մասը աջողված է, և կարող է համարվել ժողովրդական հեքիաթի նմուշ։ Թերթելով այդ տեսակ գրքոյկները, որոնք վերջին ժամանակներս սկսել են բաւական շուտ շուտ լոյս տեսնել, չենք կարող չը նկատել, որ դրանց հրատարակողները պէտք է անպատճառ լուրջ ուշադրութիւն դարձնեն գործի վրա, ապա թէ ոչ այդ բոլոր հրատարակութիւնները հեշտութեամբ երբէք չը կարդացվելու վտանգին ենթարկվեն։ Բայց չէ որ ամեն մի գիրք հրատարակվում է կարդացված լինելու համար....

—

Նիցցայից (Ֆրանսիա) դեկտեմբերի 16/28-ից «Հիւսիսային դործակալութիւնը» հեռագրում է հետևեալը. «Երէկ տեղի ունեցաւ գներալ Լորիս-Մելիքովի հանդիսաւոր թաղումը։ Սգալի հանդիսին ներկայ էր բազմաթիւ ժողովուրդ. դագաղի յետևից գնում էին Նիցցայի զօրաբաժինը և բարձը իշխանութեան ներկայացուցիչները»։

—

Պետական կալուածների մինիստրութեան կից հիմնված է մի առանձին յանձնաժողով, որը պէտք է մշակէ Ռուսաստանում չերամապահութիւնը ծաղկեցնելու միջոցների հարցը։ Յանձնաժողովի հաւաքած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Ռուսաստանում վերջին տարիներում չերամապահութիւնը զգալի կերպով ընկած է եղել։

—

Թիւրքաց Սուլթանի իրադէով Յակոբ-փաշան վերջնականապէս նշանակված է Թիւրքաց ֆինանսների մինիստր։

—

Վրաց «Իվէրիա» լրագիրը, առիթ բռնելով այն բանը, որ զանազան կողմի հայեր փողեր են ուղարկում «Մշակին» և իրանց կողմից լրագիրը նուիրում են զանազան դպրոցներին և զանազան հիմնարկութիւններին, մատնանիշ է անում հայերի բարեգործական զգացմունքների վրա, և խորհուրդ է տալիս վրացիներին հետևել հայերի օրինակին։

—

Պ. Իզմիրեանց ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ ուղարկել է մեզ «Մշակի» տարեկան երկու օրինակի գինը, խնդրելով որ ուղարկենք մի օրինակ Ղզլարի իգական հայոց դպրոցի, իսկ միւսը Պետերբուրգի Տեխնոլոգիական ուսումնարանի հայ ուսանողների անունով։

—

Պ. Առաքել Ծատուրեանց ԲԱԳՈՒԻՑ ուղարկել է մեզ «Մշակի» տարեկան երեք օրինակի գինը, խնդրելով որ մի օրինակ ուղարկենք իր անունից Շամախու հայոց դպրոցին, միւս օրինակը Սալիան, մի պարոնին, իսկ երրորդը խմբագրութեան հայեցողութեանն է թողնում։ Մենք կը յատկացնենք այդ օրինակը պ. Ծատուրեանի անունից Ղուբայի հայոց դպրոցի գրադարանին։

—

Ստացանք ԵԱԼՏԱՑԻՑ պ. Իսահակ Յակոբեանցից 10 բուբլի յօգուտ Ս. Էջմիածնի վերաշինութեան։ Մենք կը հասցնենք այդ 10 բուբլին, նոյնպէս և այն 10 բուբլին, որը նոյն նպատակով անցեալ ամառն ենք ստացել, ուր հարկն է։ Բայց մի և նոյն ժամանակ յայտնում ենք որ այդ նպատակով չենք հաւաքում փողեր մեր խմբագրատան մէջ և խնդրում ենք այդ նպատակով այլ ևս չուղարկել մեզ ոչինչ փողեր։ Թող այդ նպատակով նուիրատուութիւնները ուղղակի ուղարկեն Էջմիածին։

—

Նրանց, որոնք կամենում են «Մշակին» բաժանորդ գրվել, խնդրում ենք որքան հնար է, շուտով յայտնել իրանց ցանկութիւնը «Մշակը» առաջիկայ 1889 թուին ստանալու, որպէս զի խմբագրութիւնը գրվողների թուի համեմատ կարողանայ տպագրել «Մշակի» առաջիկայ տարվայ առաջին համարը։

—

Ամբողջ չորս օր, սաստիկ ձիւնի պատճառով, Բագուի և Թիֆլիսի երկաթուղու երթևեկութիւնը ընդհատվելուց յետոյ, վերջապէս դեկտեմբերի 22-ին, մեծ դժուարութեամբ, շոգեկառքը Բագուից հասաւ Թիֆլիս, իր հետ բերելով երկաթուղու դծի վրա պատահած սրտաճմլիկ լուրեր։—Ինչպէս հաղորդում է վրաց «Իվէրիա» լրագիրը, Սանդաչալի և Բալաջարի երկաթուղային կայարանների մէջտեղ ցրտին զոհ դնացին երեք մարդ՝—Սանդաչալի կայարանի կառավարիչ պ. Վասիլեվսկի, շոգեշարժի մի մեքենապետ և իր օգնականը։ Սանդաչալի և Բալաջարի մէջտեղ երկաթուղու դծի վրա քամին այնքան ձիւն է ժողովել, որ այդ տեղում երկաթուղու շոգեշարժ կառքերը այլ ևս չը կարողացան առաջ դնալ և մնացին կանգնած։ Այդ բանը երբ լսում է Սանդաչալի կայարանի կառավարիչ պ. Վասիլեվսկի, իսկոյն մի ուրիշ շոգեշարժ կառքով գնում է նրան օգնելու, բայց կայարանից մի քանի վերստ հեռանալուց յետոյ, տեսնում է որ ինքն ևս անկարող է շարունակել ճանապարհը և հասնել մինչև դծի վրա մնացած վագոնները, այդ պատճառով նա հրամայում է մեքենապետին յետ դարձնել շոգեշարժը, բայց մեքենապետը՝ ինչ-ինչ պատճառներով անհնարին է համարում շոգեշարժի յետ դարձնելը։ Դժբաղդ Վասիլեվսկի, ճարահատեալ, իջնում է շոգեկառքից և ոտով սկսում է յետ դառնալ դէպի կայարանը, բայց մինչև կայարան հասնելը ճանապարհին սառչում է և անշնչացած վայր ընկնում։ Իսկ մեքենապետը և իր օգնականը՝ կործանվեցան ձիւնի մէջ և մինչև այժմս էլ նրանց մարմինը չեն գտնում։ Շաբաթ օր, դեկտեմբերի 24-ին Վասիլեվսկու մարմինը բերին Թիֆլիս։

—

Սաստիկ ցրտերի և ճանապարհների վատ լինելու պատճառով ԹԻՖԼԻՍՈՒՄ առաջին կենսական մթերքները գրեթէ դեղատան գներով են վաճառվում, այնպէս որ ձուի մի հատը ծախվում է 5 կոպէկով, մի սայլ փայտը ծախվում է 6—7 բուբլով, մինչև անգամ ջուրը, որ առաջ վաճառվում էր տակառը 3 կոպէկով, այժմ ծախվում է 6 կոպէկով, չաքարի ֆունտը՝ 25 կոպէկով։

—

ԹԻՖԼԻՍԻ Սօլօլակ թաղից բարձր գտնվող Վերին-թաղ կոչվող քաղաքամասը, որտեղ բնակվում է աղքատ դասակարգը, ամբողջապէս ներկայացնում է ամենազզուելի կեղտոտութիւնների մի կոյտ։ Այդ թաղի վրա, որտեղից իսկապէս ծնունդ են առնում տարափոխիկ հիւանդութիւններ, բոլորովին ուշք չէ դարձնվում։

—

Այս օրերս քաղաքիս աղքատ բնակիչներից ոմանք մեզ են դիմում՝ հետևեալ հարցմունքով «թէ որտեղից պէտք է փող ստանալ»։ Ինչպէս երևում է, արդէն լուրեր են տարածվել քաղաքի ազդաբնակութեան մէջ, որ փող են տալիս աղքատներին, բայց չը գիտեն թէ ինչպէս, ուր և երբ։ Շատ լաւ կը լինէր, որ այդ մասին հարկաւոր տեղեկութիւնները յայտարարեն նրանք, որոնց պարտքն է։

—

Կոմս Լորիս-Մելիքովի մարմինը Թիֆլիս բերելու մասին Պետերբուրգի լրագիրները հաղորդում են վերջնականապէս, որ հանգուցեալի մարմինը պէտք է ծովով բերվի Բաթում, և այնտեղից էլ Թիֆլիս, ուր և պէտք է թաղվի, հանգուցեալի ցանկութեան համաձայն։ Իսկ Թիֆլիսում էլ լուր է ստացված, որ կոմսի մարմինը այստեղ կը բերվի յունվարի 7-ին կամ 8-ին։

—

Պետերբուրգում հրատարակվող «Новое Время» լրագիրը՝ պ. Սուվորինի օրգանը իր դեկտեմբերի 17-ի համարում կրկին մի առաջնորդող է նուիրել Լորիս-Մելիքովի կենսագրութեանը և գործունէութեանը։ Յօդուածը թէև համակրելի չէ բովանդակութեան կողմից, բայց հետաքրքիր է այն կողմից, թէ ինչ կարծիք ունի ռուսաց պահպանողական մամուլը հանգուցեալ կոմսի գործունէութեան մասին։ Այդ յօդուածը սկսվում է հետևեալ նկատողութեամբ. «Կոմս Լորիս-Մելիքով թէև դաւանում էր հայոց կրօնը և հանաքով էլ երբեմն իրան անուանում էր «խորամանկ արմենչկա», բայց ծագմամբ, լեզուով և կրթութեամբ նա վրացի էր։ Նա մինչև անգամ հայերին չէր սիրում, և ընդհակառակը մի որ և է կովկասցի հին ընկերակցի հետ վրացերէն լեզուով խօսակցելը նրա համար մեծ ուրախութիւն էր, երբ Կախեթու գինու բաժակը առաջը դրած, ուտելով բրնձով հաւը, և կովկասեան սովորութեամբ տէրողորմեան գցելով՝ մեծ զուարճութեամբ պատմում էր իր կեանքից անթիւ դիպուածներ։»

—

Պետերբուրգի «Новое Время» լրագիրը իր

—Այդ ես ինքս էլ գիտէի, պատասխանում է հայը, բայց մի և նոյն ժամանակ շարունակում է կեղտոտ, հակառողջական կերպով ապրել։

Գրում ես թէ պէտք է նպաստել գրականութեանը, լրագրութեանը....

—Այդ ես ինքս էլ գիտեմ, պատասխանում է հայը։ Բայց մի և նոյն ժամանակ՝ ոչինչ չէ անում, որպէս զի ամենաթոյլ կերպով նպաստի լրագրութեանն ու գրականութեանը։

Գրում ես թէ պէտք է գրողների և առհասարակ մտաւոր գործիչների համար խնայողական արկղ, կամ օժանդակիչ ընկերութիւն հիմնել։

—Ես ինքս էլ գիտեմ, որ դա հարկաւոր է, անպատճառ կը պատասխանի հայը։ Բայց մի և ժամանակ ոչինչ չի անի որ այդ տեսակ ընկերութիւն իրագործվի.....

Գրում ես որ պէտք է նիւթապէս օգնութիւն հասցնել կարօտեալներին ցրտի և վարակիչ հիւանդութիւնների ժամանակ...

—Այդ ես ինքս էլ գիտեմ, պատասխանում է հայը։ Բայց դարձեալ ոչինչ չէ անում։

Վերջապէս ինչ է պահանջում հայը հայոց լրագրից, այդ ոչ ես գիտեմ, ոչ էլ ինքն հայը գիտէ....

Պահանջում է անհնարին բաներ, պահանջում է հրաշքներ....

Պահանջում է որ լրագրութիւնը այնպէս անի, որ հայը՝ հայ չը լինի։

Այդ տեսակ հրաշք գործելը լրագրութեան ոյժերից վեր է....

Լրագրութիւնը չէ կարող մի տասնեակ տարվայ մէջ հայերից քաղաքակիրթ եւրոպացիք դարձնել....

***

Հիւանդութիւնների վրա խօսելով, ակամայ յիշեցի այն տխրալի և մի և նոյն ժամանակ ծիծաղելի դրութիւնը, որի մէջ գտնվում է այժմ քաղաքի ազգաբնակութիւնը։

Բնակիչներից իւրաքանչիւրը աշխատում է փախչել միւսներից, որքան հնար է սակաւ յարաբերութիւններ ունենալ մարդկանց հետ։

Երբ որ երկու մարդիկ միմեանց հանդիպում են փողոցում, կամ մին միւսի մօտ հիւր է գալիս,—մին միւսին դեռ ես ձեռք չէ մեկնում, այլ ձեռք մեկնելուց առաջ դեռ հարցնում է.

—Ձեր տանը հօ հիւանդ չը կայ...

Ապա, եթէ միւսը պատասխանում է թէ չը կայ, միմեանց ձեռք են մեկնում և սկսում են խօսակցել։

Առաջ փողոցային աւազակների դէմ փողոցում ուշ գիշերով շրջողները զրպանում ռէվոլվէր էին ման ածում,—այժմ քաղաքի փողոցում գիշեր թէ ցերեկ ման եկողը զրպանում պուլվերիզատոր է մանածում, լի կարբոլեան թթուով, որպէս զի ծանօթին հանդիպելիս անմիջապէս սկսի սրսկել այդ թթուով նրա շորերը.... և ապա մեկնում է ձեռքը ծանօթին ու բարևում նրան։

Ծանօթները միմեանց հանդիպելիս այլ ևս «բարի լոյս», «Աստուծու բարի» չը կայ,—այլ բոլորն էլ միմեանց վրա իւէթ աչքով են նայում, ամեն մէկը միւսի վրա նայելիս մտածում է՝ «չը լինի թէ նրա տանը ծաղիկ, քուլթէշ, կամ դիֆտերիտ կայ։»

Լսում եմ որ դիտաւորութիւն կայ քաղաքիս բոլոր հիմնարկութիւններում, բանկերում և այլն, դռների առջև ծառաներ կանգնեցնել, որոնք ձեռքին բռնած կունենան մեծ մեծ պուլվերիզատորներ, մտնողների շորերը կարբոլեան թթուով սրսկելու համար։ Նոյնը կանի և քաղաքային դումայի նախագահը. նա իր սեղանի վրա դրած կունենայ մի մեծ պուլվերիզատոր և իւրաքանչիւր ձայնաւորին խօսք տալուց առաջ դեռ կը սկսի սրսկել նրան, ապա թոյլ կը տայ խօսելու։

***

Նահանջ տարին շատ վատ է լինում առհասարակ։ Գոնէ շուտով անցնէին ներկայ տարվայ վերջին մի քանի օրերը։ Ինչ ասես ցաւ ու դարդ կար այս տարի ոչ թէ միայն Թիֆլիսում և Անդրկովկասում, բայց և ամբողջ Եւրոպայում, ամբողջ երկրագնտիս վրա.... Հիւանդութիւններ, երկրաշարժներ, ամառ ժամանակ ցուրտ, ձմեռ ժամանակ տարափոխիկ ցաւեր, յանկարծակի մահեր, հրդեհներ, հեղեղներ, գնացքների խորտակումներ, անձնասպանութիւններ.... ամեն տեսակ վատ բաներ կային այս տարի.... Միայն ոչինչ լաւ բան չունեցանք։

***

Բայց, ինչքան անպիտան էլ լինէր նահանջ տարին, դարձեալ պէտք է մտածել տարվայ վերջին օրերը ուրախութեամբ անցկացնել, ուրախութեամբ նոր տարին հանդիպելու համար, դարձեալ ամեն մէկը մեզանից պէտք է մտածէ նոր տարվայ համար իր սիրելիներին հաճելի ընծաներ անելու....

***

Բայց որովհետև ֆելիետոնիստը չէ կարող ամեն մի հային կամ հայուհուն, որոնք բոլորն էլ իր ընթերցողներն են, ուրեմն իր սիրելիները, ջոկ ջոկ ընծաներ անել նոր տարվայ առիթով, ուստի ես վճռել եմ, խմբագրի թոյլտուութեամբ, նոր տարվայ նախընթաց օրը մի մեծ և չքեղ եօլկա (տօնածառ) սարքելու ամբողջ հայոց ազգի համար։

***

Խմբագրութեան սենեակներում դրված կը լինի մի մեծ և չքեղ տօնածառ, որը գեղա-

դեկտեմբերի 16-ի համարում քաղուածօրէն առաջ է բերում «Express Orient» լրագրի Կ. Պոլսի թղթակցի մի յօդուածը, որը վերաբերում է Մակեդոնիային և Հայաստանին։

—

Բագուից հաղորդում են տեղական ռուս լրագրներին, որ Սալեանի կողմերի աղքատ ազգաբնակութիւնը զանազան հիւանդութիւններից ազատելու և օգնելու համար, Բագուում, պ. Թաղիեվի նախաձեռնութեամբ կազմվել է մի ռուսերէն ներկայացում, յօգուտ սալեանցիների։ Ինքն պ. Թաղիեվ այդ նպատակի համար նուիրել է 1,500 ռուբլի։

—

Թէ քաղաքային վարչութեան մէջ և թէ Թիֆլիսի ոստիկանապետի դիւանատանը հանգանակութիւն է բացված, քաղաքի աղքատ դասակարդին օգնելու համար։ Անկասկած հասարակութեան ունևոր մասը համակրութեամբ կը վերաբերվի այդ գործին, որով և կարելի կը լինի ազատել սարսափելի ցրտից և քաղցածութիւնից հարիւրաւոր թշուառ ընտանիքներ։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են հետևեալը. «Սովորական հայկական երեկոյթը» այս տարի տեղի ունեցաւ դեկտեմբերի 16-ին «Բլագորոդնօէ սոբրանիէի» շինութեան մէջ, որի սանդուղները և սենեակները զարդարած էին մեծ ճաշակով. սենեակներից մէկում պատից կախած էր թատերագրող Սունդուկեանի մեծ ու շատ աջող նկարած պատկերը, որ նկարել էր երիտասարդ Պիրագեան։ Երեկոյթի սկզբում խաղացին «Էս էլ քի մոցիքլութիւն» վոդեվիլը, որը միջակ անցաւ և «Պէպօ» II արարուածը, որը աջող անցաւ շնորհիւ Թաղիանոսեանի (Արութին). տ. Բէլօի, (Էմիլիա) և Սվէշնիկեանի (Պէպօ)։ Պարի ժամանակ ներկայացրին չորս կենդանի պատկերներ, որոնց հասարակութիւնը ընդունեց ոգևորութեամբ։ «Քրդերի հրոսակների յարձակումը» կրկնվեց երեք անգամ։ Երգիչ Շահլամեանը solo և խմբով երգեց մեծ աջողութեամբ հայերէն և ռուսերէն երգեր։ Ի՞նչ ասել կուզէ, որ «լեզգինկան» կար, միայն պարողները վերջը ի չարը գործ դրին հասարակութեան համբերութիւնը։ Մի բան, որ նկատելի էր՝ դա պարերի ու առհասարակ երեկոյթի անկենդանութիւնն էր, որին ոչ պակաս նպաստում էր և կարգադրիչների բացակայութիւնը և հասարակութեան նուազութիւնը։ Սովորական հասարակութեան կէսը հազիւ կար այս տարի։ Դա ունի իր պատճառը. միշտ հայ ուսանողները տոմսակները նախօրօքման էին ածում անից տուն, որից ի հարկէ քիչ դժգոհութիւններ չէին ծագում, իսկ այս տարի այդ բանին վերջ տուեցին։ Ասում են որ տեղիս հռչակված բարերարները չգրաս միւս տարիներից քիչ նուէրներ տվին «երեկոյթի» սարքողներին. դա ասենք հասկանալի է....»

—

Մեզ հեռագրում են ԹԷԼԱՒԻՑ որ դեկտեմբերի 25-ին այդ քաղաքի հայոց մայր-եկեղեցում, Թէլաւի հայ հասարակութեան խնդիրքով, կատարվեց հոգեհանդիսատ հանգուցեալ կոմս Միքայէլ Լօրիս-Մէլիքովի յիշատակին։ Թէլաւի քաղաքային դեպուտատը քաղաքի հայոց հասարակութեան անունից խնդրում է յայտնել Թելաւեցիների խորին ցաւակցութիւնը հանգուցեալի մօրը, որը կենում է Թիֆլիսում։

—

Փարիզի բժշկական ֆակուլտետում մինչև այս տարի աւարտել են 37 հայ բժշկներ։ Այս տարի էլ աւարտեցին չորս հոգի, այն է Տէր-Գրիգորեան (Թիֆլիսեցի), Լօրիս-Մէլիքեան (Թիֆլիսեցի), Խանճեան (աղրիանուպօլսեցի) և Տէր-Զաքարեան (մեղրեցի)։

—

Ռուսաց դրամատիական խմբի անդամներից մէկը, պ. Զավիալով գրել է մի դրամա «Два дѣльца» անունով. դրամայի նիւթն է վերջին երկու ամիսների ընթացքում Թիֆլիսի և ամբողջ Կովկասի հասարակական կարծիքը զբաղեցրած մի ինքնասպանութիւն։ Դրամատիական դրաքնիչի կողմից դրաման արդէն թոյլատրված է ներկայացման համար, և ինչպէս լսում ենք, այդ պիէսան շուտով պէտք է ներկայացնեն Բանկի թատրոնի բեմի վրա։

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվեցաւ Երևանի թեմական դպրոցի յիսնամեակի՝ սկսած 1837—1887 թւականի պատմութիւնը։ Կաշխատենք ծանօթացնել հասարակութեանը այդ յիսնամեակի գլխաւոր կէտերի հետ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԻՏԱԼԻԱՑԻ ՄԱՍԻՆ

—

Անկախութեան բարիքները նոր վայելած Իտալիան՝ իր քաղաքական գործունէութեան մէջ հէնց այժմ, երբ նա յոյս ունէր երեքպետեան դաշնակցութեան մէջ վայելել շատ արտօնութիւններ և հասնել քաղաքական մեծ իրաւունքների, անաջողութիւնների է հանդիպում։

Այդ անաջողութիւնների գլխաւոր աղբիւրը այն է, որ հասարակաց կարծիքը չէ հաշտվում մինիստրութեան ուղղութեան հետ, և այդ անաջողութիւնը քանի դնում, այնքան էլ սուր բնաւորութիւն է ստանում։

Արդ, հետաքրքրական է իմանալ, ինչից է արդեօք առաջ գալիս այդ թշնամութիւնը երկու կողմերի մէջ։

Բացատրենք մի քանի խօսքով։

Դեռ սրանից մի քանի օր առաջ կառավարութեան ցանկութիւններից մէկը հաւանութիւն գտաւ պատգամաւորների ժողովում,—այդ այն է, որ այժմեան մինիստրութեան զինուորական օրինագծերը ընդունվեցան. ուրեմն կառավարութիւնը իրաւունք ստացաւ մեծացնելու ծովային և ցամաքային ոյժերը և ռազմագիտական նշանակութիւն ունեցող երկաթուղիների գծերը։

Բայց չէ՞ որ այդ բոլորի համար դրամ է հարկաւոր։ Որտեղից վերցնել այդ դրամը,—ահա հարց, որ չէ վճռված, կամ աւելի ճիշդ ասած, անկարելի եղաւ վճռել։

Կառավարչական օրինագծերի կողմնակիցները առաջարկում են մեծացնել ժողովրդի վրա դրած հարկերը, առաջարկում են աւելացնել հողային հարկը, աղի վրա եղած հարկը, և կամ արտաքին փոխառութիւն անել։ Շատ լաւ. բայց արդեօք այդ միջոցները իրագործելի են, արդեօք Իտալիայի ֆինանսական այժմեան դրութեան միջոցին կարելի է նոր հարկեր դնել ժողովրդի վրա, քանի որ, ինչպէս ասել է պատգամաւոր կոմս դը-Արկո, «իտալացիները խեղդվում են» հարկերի տակ։

Մինիստր-նախագահ Կրիսպիի պատերազմական քաղաքականութեան պատճառով Իտալիան ֆինանսական դժուարութիւնների մէջ է, և հէնց այդ պատճառով նոր օրինագծերի գործադրութիւնը և նոր դրամական միջոցներ ձեռք բերելու խնդիրը գրգռել են հասարակաց կարծիքը, որի հետ միացած են արմատական և աղատամիտ կուսակցութիւնները, և այդպիսով անհաշտութիւն է տիրապետում հասարակաց կարծիքի և մինիստրութեան, այն է կառավարութեան ղեկավարների մէջ։

Այդ անհաշտութիւնը, ի հարկէ, նպաստաւոր չէ Իտալիայի ոչ ներքին և ոչ արտաքին քաղաքականութեան համար։

Ինչպէս յայտնի է, այժմեան մինիստրութեան գլխաւորը՝ Կրիսպի, ձգտել է և ձգտում է՝ Իտալիան կապել Գերմանիայի և Աւստրիայի հետ, յոյս ունենալով, որ երեքպետեան դաշնակցութեան մասնակցելով Իտալիան կարող կը լինի մեծ դիրք ձեռք բերել Եւրոպայի քաղաքականութեան մէջ, և այդպիսով կանոնաւորել իր ներքին և դաղթական գործերը։ Կրիսպի այն համոզմունքի է, որ թոյլը միշտ օգուտ կունենայ ուժեղի հետ միանալուց, կամ, ինչպէս մենք հայերս ասում ենք, «ուժեղի կռան տակ մտնելուց». բայց արդեօք աջողութիւն և ապագայ ունի երեքպետեան դաշնակցութիւնը, և միթէ ամենամեծ հարուածը թոյլ Իտալիայի գլխին չի հասնի, երբ երեքպետեան դաշնակցութիւնը անաջողութեան հանդիպի....

Զը մոռանանք և այն, որ այժմեան մինիստրութեան շնորհով Իտալիան շատ հեռացել է Ֆրանսիայից, Իտալիան և Ֆրանսիան համարեա թէ միմեանց հետ թշնամացել են և այդ, ի հարկէ, իշխան Բիսմարկի մեքենայութիւնների շնորհով։ Դրա դէմ էլ է բողոքում իտալական ազգը, մանաւանդ որ վերջին ժամանակներս Գերմանիայի և Իտալիայի բարեկամական յարաբերութիւնների հորիզոնի վրա,—ասենք սովորական լեղուով,—մի քանի ամպեր երևեցան, ինչպէս է Բերլինից իտալացի թղթակիցների աքսորելը և այլն։

Հասարակաց կարծիքը թեքվում է դէպի Ֆրանսիան, իսկ կառավարութեան կողմնակիցները թեքվում են դէպի Գերմանիան. հասարակաց կարծիքը և առաջադէմ կուսակցութիւնները թեքվում են խաղաղութեան կողմը և դէմ են զինուորական օրինագծերին և նոր հարկեր դնելուն, իսկ կառավարութեան ղեկավարները Իտալիայի փրկութիւնը զինուորական օրինագծերի մէջ են տեսնում։—Այդտեղից առաջ է գալիս անտագոնիզմ երկու կողմերի մէջ,—և այդ, ի հարկէ, ձեռնտու չէ մանուկ Իտալիայի զարգացման համար։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բէլգրադից հեռագրում են, որ գիւղական շրջանների արմատական ներկայացուցիչները սկուպշչինայում կազմել են առանձին կուսակցութիւն և որոշել են դիմադրական դիրք բռնել։

—Վիէննայում նոր լուրեր են տարածվել, որ Կրիտէ կղզու վրա նոր և աւելի սաստիկ ապստամբական շարժումներ են առաջ եկել։

—Բելգիայի հոգևորականութիւնը, գլխաւորապէս եպիսկոպոսները, դրաւոր կերպով դիմելով իրանց հօտին, «ճշմարիտ կաթոլիկներին», հրաւէր են կարդում նպաստ և աջակցութիւն ցոյց տալ պապի աշխարհային իրաւունքները վերականգնեցնելու գործին։

—Սոֆիայից, որպէս լուր, հեռագրում են, որ իբրև թէ Կոբուրգեան պրինցի և Ստամբուլովի մէջ տարաձայնութիւններ են պատահել։ Ստամբուլով արդէն անցել է դիմադրականների կողմը։

—Բէլգրադից գրում են, որ կառավարչական և դիմադրական կուսակցութիւնների գլխաւոր անհաշտութեան պատճառը այն է, որ դիմադրականները ուզում են Սերբիայի արտաքին քաղաքականութեան ուղղութիւնը միանգամայն ենթարկել Սերբիայի ազգային ոգու տրամադրութեան։ Այդ բանին դէմ է ինքն Միլան թագաւորը։

—Արևելեան-Աֆրիկայում գտնվող գերմանական զինուորների մէջ տարափոխիկ հիւանդութիւններ են երևացել, որոնք բազմաթիւ զոհեր են տանում։ Այդ բանը շատ ծանր ազդեցութիւն է գործել Գերմանիայում՝ հասարակական կարծիքի վրա։

—Հռոմում սպասում են Անգլիայի երևելի գործիչ Գլադստոնի գալուն։ Թէ Հռոմը և թէ կառավարութիւնը պատրաստվում են լաւ կերպով ընդունելու մեծանուն քաղաքագէտին։

—Վիէննայի «Neue Freie Presse» լրագիրը յանդիմանում է այնտեղի կիսապաշտօնական հեռագրական գործակալութիւններին այն պատճառով, որ «նրանք լռութեան են տուել մի այնպիսի նշանաւոր լուր, ինչպիսին է կոմս Լօրիս-Մէլիքովի մահը Նիցցայում»։ Երևում է, որ աւստրիական կիսապաշտօնական հեռագրական գործակալութիւնները բաւական նման են Ռուսաստանի կերպով զարդարելը կը յանձնվի մեր յայտնի նկարիչ և «Մշակի» աշխատակից պ. Գէորգ Բաշինջաղեանին։

Խմբագրութեան դահլիճի դրան մօտ, որպէս զի վարակիչ հիւանդութիւնները «Մշակի» խմբագրութիւնը չը մտնեն՝ կանգնած կը լինի մեր աշխատակից, բժշկապետ Գրիգոր Տէր-Գրիգորեան (Թիֆլիսեցի), մի ձեռքին բռնած ունենալով իր յօդուածները վարակիչ հիւանդութիւնների մասին, իսկ միւս ձեռքին մի ահագին պուլվերիզատօր, կարբոլեան թթուով։

Տօնածառի վրա կախ արած կը լինեն ամեն տեսակ թանգագին ընծաներ։

Մեր ազգային երեցփոխների համար ծառի ճիւղերի մէնից կախարած կը լինեն ոչ թէ կըրկնակի իտալական գրապահութեան, այլ եզակի հայկական գրապահութեան, Գէորգ Աքիմեանցի մեթոդով կազմված հաշուապահութեան բազմաթիւ մատեանները։

Տնտեսագէտների համար տօնածառի վրա կուենենք Արասխանեանցի տնտեսագիտական յօդուածների և նրա դասախօսութիւնների լիակատար ժողովածուն։ Նմանապէս նրա միւս գրուածները այն մարդկանց համար, որոնք կուզենան սովորել ճարպիկ հակասութեամբ կեանքի ամեն տեսակ դժուար դիրքից դուրս պրծնելու, երբ նեղն են ընկած կեանքի հանգամանքների շնորհով։

Կեանքի ամեն հանգամանքներում կուսական զգացմունք պահպանել ցանկացողների համար կախված կը լինեն ծառի վրա «Մուրճի» անթիւ յայտարարութիւնները այսպիսի վերնագրով՝ «Հրաւէր Մուրճի խմբագրութեան»։

Հայ իրաւաբանների համար կընծայվի Գէորգ Եւանդուլեանի իրաւաբանական հեղինակութիւնների լիակատար ժողովածուն։

Մեր քաղաքի բժիշկների համար սեղանի վրա, ծառի տակ դրված կը լինեն՝ մեծ կարասներով «Ֆաէտոնի ջուրը» և կոնֆէկտների գեղեցիկ արկղիկներում՝ ամեն տեսակ և ամեն ձևի բակտէրիաները....

Մեր երիտասարդների համար կախված կը լինեն ծառի վրա նշանելու հայ օրիորդների բազմաթիւ լուսանկար պատկերները, որոնցից իւրաքանչիւրի տակ նշանակված կը լինի բաժինքի հաւանական, բայց ոչ իսկական չափը, որովհետև եթէ բաժինքի իսկական դումարը նշանակվի, մեր երիտասարդներից այլ ևս ոչ մին երբէք չի ամուսնանայ։

Մեր օրիորդների համար կընծայենք «Кавказскій календарь» անուանված օրացոյցը, որի մէջ տպված են լինում այբուբենական ցանկով բոլոր պաշտօնեաների ազգանունները, այնպէս որ մեր նազելի օրիորդները ուսումնասիրելով այդ օրացոյցը, կարող կը լինեն ընտրել իրանց համար յարմար և շահաւէտ պաշտօնով փեսացուներ։ Միայն «Кавказскій календарь» կազմող պ. Կոնդրատենկօին պէտք է խորհուրդ տանք եկող թուի համար իր կազմված օրացոյցի մէջ նշանակել պաշտօնեաների ազգանունների դիմաց՝ նըրանցից ով է պսակված և ով չէ։

Մեր հայ տիկիններին կընծայենք հայոց այբենարաններ, որպէս զի համ իրանք հայերէն սովորեն, համ էլ իրանց զաւակներին սովորեցնեն մայրենի լեզուն։

«Արբիւրի» խմբագիր Տիգրան Նաղարեանցին, որպէս ամենաթանգագին ընծայ, յետ կը դարձնենք նրան տարիներից ի վեր նրա հրատարակած բոլոր պրէմիաները։

Հայոց հոգևորականներին կընծայենք նրանց ամենասիրած լրագրի, այն է «Մշակ» լրագրի 16 տարվայ բոլոր համարների լիակատար ժողովածուն։

Հայ պուբլիցիստներին (հրապարակախօսներին) կընծայենք փոքրիկ և բազմաթիւ քամու ջաղացներ։

«Մշակի» խմբագրի համար կախ արած կը լինեն տօնածառի վրա հինգ մուհր կրող միլիօնաւոր փոքրիկ ծրարներ։

«Մշակի» աշխատակիցների համար կը բաժանվեն խմբագրութեան բլանկի վրա գրված բազմաթիւ նամակներ, որոնք կը պարունակեն հետեւեալ ճարտարախօս տողերը. «համբերութիւն, պարոններ, մինչև որ հինգ մուհր կրող ծրարները կը բացվեն։»

Ամբողջ հայոց հասարակութեանը կընծայվեն ամեն տեսակ ընկերութիւնների տպված կանոնադրութիւնները, այն պայմանով, սակայն, որ այդ կանոնադրութիւններից ոչ մին երբէք չիրագործվի։

Երևանի հռչակաւոր քաղաքագլուխ Գեղամեանցին կընծայվի անփոփոխ քաղաքագլխի դիպլոմը։

Հայոց ուսումնարանների ուսուցիչներին կընծայվի անփոփոխ ուսուցիչների վկայականը, իսկ նոյն ուսումնարանների տեսուչների համար մշտական պօդօրօժնիա Անդրկովկասի մի քաղաքից դէպի միւս քաղաքը անարգել կերպով անդադար շրջելու և միշտ մի տեղից միւս տեղ տեղափոխվելու համար։

Պետրոս Սիմէօնեանցին կընծայենք «Մեղու Հայաստանի» լրագրի հին համարները, որպէս զի նրանց նիւթերով քիչ թէ շատ թարմացնի «Արարատի» թմրած և անբովանդակ էջերը։

Տօնածառը կը վերջանայ բենգալեան կրակով և էլէկտրականութեամբ լուսաւորված մի շքեղ ապօթէօզով, որը կը ներկայացնի մի կենդանի պատկեր և որի բովանդակութիւնը կը լինի հայկական կեանքի վերջին օրերումս պատահած ամենանշանաւոր անցքը,—այն է Ղազարոս Աղայեանցի հաշտվելը Գրիգոր Արծրունու հետ։

Հա.... մոռացայ մեր դրաշարներին։ Նրանց ոչինչ չենք ընծայի, այլ միայն կը ցանկանանք որ համբերութիւն ունենան, և սպասեն մինչև որ կը կարողանան շարել այն ամեն գրուածները, որոնք դրվում են։

ԱՍԻԱՑԻ

տանի հեռագրական գործակալութեան։

—Դեկտեմբերի 15-ին Փարիզում կայացաւ Պանամայի ընկերութեան ակցիոներների ժողովը. ներկայ էին 4,000 ակցիոներներ։ Ժողովը վճռեց շարունակել գործը, ձեռք բերել հարկաւոր գումարը և դրա հետ միասին յայտնեց Լեսեպսին կատարեալ հաւատք։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզում նոր մոդա է մտել. կանայք սկսել են կրել ժամացոյցներ, իբրև զարդարանք, իրանց ապարանջանների, մանեակների, գլխարկների և մինչև անգամ կօշիկների վրա։ Այդ մօդան հաւանական է, որ մեզ մօտ մուտք չի գործի, որովհետև արտասահմանից այստեղ ժամացոյց բերել տալը մաքսի պատճառով այնքան թանգ է նստում, որ դժուար թէ այսպիսի «քեասատ» ժամանակ այդ մօդան լաւ ընդունելութիւն գտնի։

* * *

Բուդապէշտում նորերս տեղի ունեցաւ մի ողբերգական դէպք։ Պատճառը էլի «սէրն» է։ 17 տարեկան մի պատանի և 14 տարեկան մի աղջիկ շատ թունդ սիրահարվեցան։ Նրանք շատ սպասեցին իրանց հարսանիքին,—բայց համբերութիւնը հատաւ և սիրահարվածները վճռեցին մեռնել։ Մի գեղեցիկ օր երկու սիրահարները գնացին Դունայի ափը. առաջ պիտի ինքնասպանութիւն գործէր օրիորդը։ Ջահիլ աղջիկը, առանց երկար մտածելու իրան նետեց դեպը, բայց ցուրտ ջուրը, ինչպէս երևում է, շատ շուտ աղդեց օրիորդի վրա, վերադարձրեց նրան լուրջ դատողութիւն և նա սկսեց «օգնութիւն» կանչել։ Օգնութեան եկած մարդիկ վրա հասան և այն րոպէին, երբ նրան ազատեցին, ափում կանգնած պատանին երեք անգամ ատրճանակ արձակեց իր վրա։ Բարեբաղդաբար գնդակներից ոչ մէկն էլ չը դիպաւ հերոսին, և նրան, թրջված և սառած աղջկայ հետ միասին տարան ոստիկանատուն, ուր նրանց շուտով հանդիպեցին իրանց ծնողները....

* * *

Ֆրանսիական պատգամաւորների ժողովին այս օրերս ներկայացրած է մի նախագիծ, որով առաջարկվում է ոչնչացնել դրամատիական գրաքննութիւնը (ցենզուրա)։

* * *

Լօնդօնի մի քանի լրագիրներ հաղորդում են, որ իբրև թէ Ռուսիայի դքսի հոդեկան դրութիւնը շատ վտանգաւոր կերպարանք է ստացել։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԲԷԼԳՐԱԴ, 23 դեկտեմբերի։ Մեծ սկուպշչինան փակվելուց յետոյ, Միլան թագաւորը յայտնեց, որ ներումն է շնորհում այն բոլորին, որոնք դատապարտված են մամուլի օրէնքները խախտելու համար, և այն անձանց, որոնք մեղադրվում են քաղաքական յանցանքների և ընտրութիւնների ժամանակ կատարած անկարգութիւնների պատճառով։

ԲԵՐԼԻՆ, 25 դեկտեմբերի։ Գաղտնի խորհրդական Գեֆկէն, որը մեղադրվում է Ֆրիդրիխ կայսրի յիշատակարանը տպագրելում, դատաստանից աղատված է։ Նոր տարվայ առիթով իշխան Բիսմարկ ստացել է Վիլհելմ կայսրից հրովարտակ, որը գրված է ամենագովասանական խօսքերով։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Դեկտեմբերի 23-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ. .	95 ր.	25 ›
Համբուրգի վրա 100 մարկ — . .	46 ›	60 ›
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 ›	50 ›
Ոսկի — արժէ — . .	7 ›	60 ›
Մաքսային կուպոններ — . .	150 ›	— ›
Արծաթ — — — . . .	1 ›	14 ›
Բորսային դիսկոնտներ — . . .	— ›	— ›
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի	98 ›	75 ›
— — — — 2-րդ —	97 ›	75 ›
— — — — 3-րդ —	97 ›	62 ›
— — — — 4-րդ —	97 ›	62 ›
— — — — 5-րդ —	97 ›	62 ›
— — — — 6-րդ —	140 ›	50 ›
Նոր 4% փոխառութիւն.	81 ›	75 ›
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	98 ›	— ›
— — 2-րդ —	97 ›	75 ›
— — 3-րդ —	97 ›	25 ›
Ներքին 5% առաջին փոխառութ.	273 ›	50 ›
— երկրորդ —	246 ›	— ›
5½% րէնտա	102 ›	— ›
Ոսկեայ րէնտա.	173 ›	— ›
Եօթերորդ կոնսոլիդած փոխառութիւն.	148 ›	50 ›
Նոր երկաթուղային րէնտա . . .	98 ›	25 ›
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մետ.	— ›	— ›
— — թղթադ. .	91 ›	— ›
Գրաւ. թղ. Ազն. բանկի . . .	98 ›	— ›
5½% գրաւական թղթեր Խերսօնի կալուած բանկի.	97 ›	— ›
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	100 ›	— ›
— — Պոլտավայի— —	100 ›	25 ›
— —Պետ.Տուլսկ.— —	99 ›	75 ›
— — Կիեվի — —	101 ›	— ›
— — Մոսկվայի — —	101 ›	25 ›
— — Բեսարաբ. Տավր.—	99 ›	75 ›
— — Նիժ. Սամար. —	100 ›	— ›
— — Վիլնայի —	99 ›	25 ›
— — Թիֆլիսի—72 և — տ. —	›	— ›
— —Ռոստայիսի-18 և — տ. —	›	— ›
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները	673 ›	— ›
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	239 ›	— ›
Ռիբինսկ-Բոլոգովի ընկ.	85 ›	50 ›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	91 ›	87 ›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	91 ›	62 ›
Օդեսայի — — .	96 ›	26 ›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .	— ›	— ›

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Открыта подписка на газету

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“

на 1889 годъ.

Газета неизмѣняя своего направленія, и въ будущемъ году будетъ издаваться ежедневно, исключая послѣпраздничныхъ дней. Постепенно возростающій успѣхъ «Тифлисскаго Листка» побудилъ насъ значительно увеличить программу газеты. Съ будущаго года, помимо существовавшихъ отдѣловъ, мы будемъ помѣщать всѣ правительственныя распоряженія, равно приказы о производствѣ въ чины и награжденія орденами по военному и гражданскому вѣдомствамъ. Отчеты думскихъ засѣданій и рефераты мѣстныхъ ученыхъ обществъ мы будемъ составлять болѣе подробно чѣмъ въ истекающемъ году. Главнымъ образомъ, мы направимъ всѣ свои усилія къ развитію «Мѣстнаго отдѣла», давая въ немъ возможно полныя свѣдѣнія о мѣстной жизни, о мѣстныхъ злобахъ дня и вообще о выдающихся событіяхъ и проявленіяхъ общественной житни. Обращено будетъ нами также вниманіе и на отдѣлъ беллетристическій.

Увеличеніе программы газеты, сопряженное съ нѣкоторыми затратами, вынуждаетъ насъ набавить на подписную цѣну одинъ рубль, такимъ образомъ, вмѣсто трехъ рублей, городскіе подписчики будутъ платить четыре руб., для иногороднихъ-же подписчиковъ цѣна остается прежняя-.

ПОДПИСНАЯ ЦѢНА

Съ доставкой въ Тифлисѣ.	Съ пересылкой для иногороднихъ
На годъ . . . . 4 р. — к.	На годъ . . . . . 5 р.
› полгоа . . 2 › 50 ›	» полгода. . . . . 3 ›
› 1 мѣсяцъ . —› 50 ›	› 1 мѣсяцъ . . . . . 1 ›

Подписка и объявленія принимаются исключительно въ конторѣ редакціи „Тифлисскаго Листка“, на Барятинской улицѣ, д. Ротинова.

Подписка принимается только на вышеуказанные сроки съ 1-го числа любаго мѣсяца. 1—3

ՄԻ ՀԱՄԵՍՏ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ ընդունում է գիշերօթիկ և կիսագիշերօթիկ 8-ից մինչև 13 տարեկան ԵՐԵԽԱՆԵՐ։
Հարցնել Վանքի փոքր փողոց № 5.
1—10 (ե. շ.)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.
Հինգշաբթի, յունվարի 5-ին, ԱՆԱՏՕԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԵԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Դէմիրօղլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում նախկին Արծրունի գալերէում, № 103. 2—3 (շ. ե. կ.)



ՕՊՏԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Մ. Գ. ՅԷՅՏԼԻՆԻ

ժամացոյցների մագազինում։ Պալատի այդու դիմաց, անկիւնի մագազինը։

Ամեն տեսակ **ԱԿՆՈՑՆԵՐ, ՊԷՆՍՆԷ, ԼՕՐՆԷՏՆԵՐ և ՋԵՐՄԱՋԱՓԵՐ**

Տրվում են ճշդութեամբ պ.պ. բժիշկների կարգադրութեան համեմատ, նոր մետրական և նախկին դիւյմային սիստեմայով։

Կարկատվում են ակնոցները և նոր ապակիներ են դրվում։
ԳՆԵՐԸ ԱՄԵՆԱՋԱՓԱՒՈՐ ԵՆ։ 4—6 (ե)

ՎԷ ԺԻՐԱՐԴՈՎՍԿՕՄԷ ՍԿԼԱԴԷ

Դվորցովայա փողոցում, նախկին Արծրունի քարվանսարայում
ՍՏԱՑՎԱԾ ԵՆ
ԲՐԴԵԱՑ ՎԵՐՄԱԿՆԵՐ ամենաէժան գներից մինչև ամենաթանգ գները։
ԴՈՆՆԷՐ և ԼԷՑՏ
3—10 (հ)

БОЛЬШАЯ РАСПРОДАЖА

ЦЕНТРАЛЬНЫЙ ГАЛАНТЕРЕЙНЫЙ МАГАЗИНЪ

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Միայն մինչև նոր տարի **ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԱԼԱՆՏԷՐԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ**, Երևանեան հրապարակի վրա, Զուբալովի տանը, քաղաքային Սկուէրի և ռուսաց Սէմինարիայի դիմաց։

Ամեն տեսակ գալանտերէական և մոդային ապրանքներ, տնային-տնտեսական առարկաներ, լամպաներ, լապտերներ, մելխիորից և բրոնզեայ իրեր, ամանեղէններ, սեղանի պարագաներ, ֆոտոգէնեան խոհանոցներ, բարակ ճերմակեղէն, ֆուֆայկաներ, գուլպաներ, աղուխներ, ծածկոցներ, սալֆէտներ, կօշիկներ, գլխարկներ, կօրսէտներ, գլխի աղուխներ, ժէրսէներ և այլն։ Մեծ ընտրութիւն մանկական խաղալիկների, տիկինների և ալբոմների։ 5—6

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԿԸ

„THE NEW ORIENTAL BANK CORPORATION LIMITED“, որը աշխարհիս ամեն մասերում ունի բաժիններ, այժմ բաց է արել իր գործունէութիւնը **ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ**, որտեղի կենտրոնական բաժինը, որը գտնվում է ԹԷՀՐԱՆՈՒՄ, կատարում է ամեն տեսակ բանկային օպէրացիաներ։

Ցիշեալ բանկի ագենտը կովկասում
9—10 **ԲՈՒՐԳՀԱՐՏ և ԸՆԿ.**

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ПОДПИСКА НА

„ТРУДЫ“

Кавказскаго Общества Сельскаго Хозяйства

1889 года,

выходящіе ежемѣсячно и посвященные нуждамъ кавказской сельскохозяйственной промышленности,

ПРИНИМАЕТСЯ ВЪ ТИФЛИСѢ,

въ канцеляріи Кавказскаго Общества Сельскаго Хозяйства, что на Барятинской улицѣ, въ Александровскомъ саду. Подписная цѣна изданія за годъ ЧЕТЫРЕ РУБ. съ пересылкою во всѣ города Россійской имперіи и доставкою на домъ. Отдѣльные номера не продаются. Для напечатанія въ „Трудахъ“ принимаются сельско-хозяйственныя объявленія, по соглашенію съ бюро Общества. 1—3

САРПИНКА. | Пріемъ заказовъ и пересылка во всѣ города Россіи и за-границу. | СЕЗОНЪ 1889 Г.

собственой выработки САРПИНСКІЯ ИЗДѢЛІИ ручнаго ткачества
родъ зефира, для лѣта на дамскія платья, дѣтскіе костюмы и мужскія сорочки.
Отлично моются.
Цѣны отъ 15 до 22 копѣекъ за аршинъ.
ОГРОМНАЯ КОЛЛЕКЦІЯ НОВѢЙШИХЪ ОБРАЗЦОВЪ
высылается заказной бандеролью въ альбомѣ за 42 и въ конвертѣ за 28 копѣеткъ почтовыми марками. Цѣны и условія при образцахъ.
Адресъ: Саратовъ. „Товариществу промышленниковъ сарпинскихъ издѣлій.“

СЕЗОНЪ 1889 Г. | ПРОДАЖА ШТУКАМИ и АРШИНАМИ. | САРПИНКА.

3—5 (10 և 25)

Дозволено цензурою, Тифлисъ 26 Декабря 1888 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.